

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28/1

13 հուլիսի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 03.07.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Արա Աղաբաբյանի 25.06.2012թ. բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 15.06.2012թ. թիվ 2115812 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 07.06.2012թ. թիվ 2115812 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Արա Աղաբաբյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 15.06.2012թ-ին կազմվել է թիվ 2115812 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Արտաշես Մելքոնյանին 07.06.2012թ. ժամը 14:30-ին ք.Երևան, Բաղրամյան 2 հասցեի դիմաց Ա/Ձ Արա Աղաբաբյանին պատկանող ավտոկանգառում մատուցվեց ծառայություն 200 դրամի չափով՝ չունենալով տվյալ հասցեում ներդրված հսկիչ-դրամարկղային մեքենա:

Համաձայն <<հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի, ՀՀ տարածքում կազմակերպության և անհատ ձեռնարկատիրոջ կողմից մանրածախ վաճառք իրականացնելու և բնակչությանը ծառայություն մատուցելիս կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում, հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառումը պարտադիր է:

Համաձայն <<հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի Ա/Ձ Արա Աղաբաբյանին նշանակվել է տուգանք՝ գումարով 300.000 դրամ:

Ա/Ձ Արա Աղաբաբյանի բողոքում մասնավորապես նշված է.

Ա/Ձ Արա Աղաբաբյանը 17.05.2012թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ-ից ձեռք է բերել 78/16951 արտոնագիրը՝ Բաղրամյան 2 հասցեում ավտոկանգառի գործունեություն իրականացնելու համար: Սակայն Ա/Ձ-ն դեռևս փաստացի գործունեություն չի իրականացրել և չի իրականացնում, այդ իսկ պատճառով առկա չէ հսկիչ-դրամարկղային մեքենան և չկա համապատասխան աշխատակից: Գործունեություն իրականացնելու դեպքում նախապես ձեռք կբերվի հսկիչ-դրամարկղային մեքենա, որը կներկայացվի գրանցման ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ-ում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ կողմից 08.06.2012թ. ստացել եմ թիվ 2115812 ակտի նախագիծը, ինչը գրավոր առարկել եմ, պարզաբանելով, որ Ա/Ձ Արա Աղաբաբյանը ակտում նշված օրերին բացակայել է հանրապետությունից՝ անձնագրում առկա է ելքի-մուտքի մասին հաստատող համապատասխան կնիքները:

Անհասկանալի է ակտի էությունն ամբողջությամբ: Հիմնավորված չէ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ տեսուչների կողմից արձանագրված 200 դրամի չափով մատուցված ծառայության փաստը: Ավտոկանգառը գտնվում է բացօթյա տարածքում և որևէ կողմից սահմանազատված չէ: Այդ իսկ պատճառով որևէ վերահսկողություն իմ կողմից, առավել ևս իմ բացակայության ընթացքում հնարավոր չէ իրականացնել: Իմ համար պարզ չէ, թե ում է վճարվել 200 դրամ ծառայության վճարը, պարզ չէ նաև, թե Կենտրոնի ՀՏ տեսուչների կողմից իրականացված ստուգումը ում նկատմամբ է կիրառվել կամ այն տեղի է ունեցել, թե ոչ: Ի վերջո իմ բացակայության ընթացքում առանց որևէ հիմնավորման իրականացվել է ինչ-որ ստուգում, որն անհայտ է, թե ում նկատմամբ է կիրառվել և արձանագրվել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Արա Աղաբաբյանի ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Հարկային տեսուչ Արտաշես Մելքոնյանը նշեց, որ 07.06.2012թ-ին ժամը 14:30-ին ք.Երևան, Բաղրամյան 2 հասցեի դիմաց Ա/Ձ Արա Աղաբաբյանին պատկանող ավտոկանգառում մատուցվել է ծառայություն: Մասնավորապես, նշված հասցեում ավտոմեքենայի կայանման համար տարածքը սպասարկող աշխատակցին վճարվել է 200 դրամ: Սակայն, հսկիչ-դրամարկղային մեքենայի բացակայության պատճառով մատուցված ծառայության դիմաց չի տրամադրվել ՀԴՄ կտրոն:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովին ներկայացվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետին հասցեագրված քաղաքացի Արմեն Զուլֆիգարյանի 03.07.2012թ-ի դիմումը (այսուհետ՝ դիմում) հետևյալի մասին: Մասնավորապես, դիմումում Արմեն Զուլֆիգարյանը նշել է, որ իր ծանոթի միջոցով ծանոթացել է Արայիկի հետ, ում օֆիսը գտնվել է Բաղրամյան 2 հասցեում: Արայիկը <Պիոներ> բարի դիմաց առաջարկել է ավտոկանգառի գործ և կատարվելիք աշխատանքի դիմաց առաջարկել է ամսական վճարել 60.000 դրամ: Ըստ դիմումի, Արմեն Զուլֆիգարյանը պետք է աշխատեր առանց ՀԴՄ-ի: Արմեն Զուլֆիգարյանը համաձայնվել է և փաստացի աշխատել է 6-7 օր: Գործունեության 7-րդ օրն այցելել են հարկային տեսչության աշխատակիցները, որոնց Արմեն Զուլֆիգարյանը հայտնել է առանց ՀԴՄ-ի աշխատելու մասին և ուղեկցել Արայիկի մոտ: Այդ դեպքից հետո Արմեն Զուլֆիգարյանը չի աշխատել:

Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Արա Աղաբաբյանի կողմից Բաղրամյան 2 հասցեում ավտոկանգառի գործունեություն իրականացնելու համար արտոնագիր ձեռք բերելու հանգամանքը, ինչպես նաև Արմեն Զուլֆիգարյանի դիմումը՝ նշված հասցեում փաստացի գործունեություն իրականացվելու վերաբերյալ, հիմնավորում են Ա/Ձ Արա Աղաբաբյանի կողմից ավտոկանգառի գործունեություն իրականացնելու փաստը:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Արա Աղաբաբյանի կողմից խախտվել են <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, որի համար կիրառվել է <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է բացասական եզրակացություն:

Հանձնաժողովը, կրկին անգամ ուսումնասիրելով սույն գանգատին առնչվող նյութերն ու ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով Գանգատարկման խորհրդի եզրակացությունը, գտնում է, որ Ա/Ձ Արա Աղաբաբյանի բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 15.06.2012թ. թիվ 2115812 ստուգման ակտը:



Հանձնաժողովի նախագահ

Տ.ԲԱՐՍԵԴՅԱՆ